«ԱրմենՏել» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2015թ.

pwc

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: 2016թ. սեպտեմբերի 9-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՄՍ) 810 *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

9 սեպտեմբերի 2016թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն փաստաթուղթը հանդիսանում է անգլերեն լեզվով պատրաստված բնօրինակի թարգմանությունը: Բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկվել են, որպեսզի հավատարիմ մնա բերվի առ այն, որ թարգմանությունը ճշգրիտ է արտացոլում բնօրինակը: Այնուամենայնիվ, տեղեկատվության, տեսակետների կամ կարծիքների մեկնաբանման դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է սույն թարգմանության նկատմամբ:

«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ
ք.Երևան 0001, Հայաստանի Հանրապետություն, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն
Հեռ. (374 60) 652 165, ֆաքս (37410) 501 341, www.pwc.com/am

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Ամփոփ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Ամփոփ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4
Ծանոթագրություն 5

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2015թ.	31 դեկտեմբերի 2014թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	39,876,490	49,192,729
Ոչ նյութական ակտիվներ	3,799,752	3,713,342
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	1,792,607	1,901,187
Տրամադրված փոխառություններ	84,382,370	28,290
Հետաձգված հարկային ակտիվներ	2,735,039	2,364,868
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	1,081	36
Հետաձգված ծախսեր իրացման պլանների գծով	-	7,922
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	70,078	70,078
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**132,657,417**	**57,278,452**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	762,979	1,123,064
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,381,991	6,244,231
Տրամադրված փոխառություններ	8,280	71,796,732
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար	5,365,563	4,947,581
Այլ փոխհատուցվող հարկեր	801,065	711,172
Հետաձգված ծախսեր	18,259	162,336
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,887,089	7,379,879
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**18,225,226**	**92,364,995**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	**150,882,643**	**149,643,447**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	18,837,709	18,837,709
Չբաշխված շահույթ	116,952,530	113,025,701
Այլ պահուստներ	2,825,656	2,825,656
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	**138,615,895**	**134,689,066**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվների ապազործարկման գծով պահուստ	695,224	616,399
Հետաձգված եկամուտ	108,681	388,441
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**803,905**	**1,004,840**
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,663,878	7,621,965
Հետաձգված եկամուտ	109,807	230,309
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	1,102,606	1,003,412
Ստացված կանխավճարներ	1,166,742	1,159,544
Պարտավորությունների և վճարների պահուստ	900,153	3,746,148
Այլ հարկային պարտավորություններ	519,657	188,163
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**11,462,843**	**13,949,541**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**12,266,748**	**14,954,381**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	**150,882,643**	**149,643,447**

Հաստատվել է հրապարակմանը և ստորագրվել է 2016թ. սեպտեմբերի 9-ին:

Անդրեյ Պյատիգորսկի
Գլխավոր տնօրեն

Ժիրայր Պապոյան
Գլխավոր հաշվապահ

հաց. 22 դրամ	2015թ.	2014թ.
Ծառայությունների մատուցումից հասույթ	51,398,809	56,264,109
Սարքավորումների իրացումից հասույթ	1,800,003	1,168,632
Ընդամենը հասույթ	**53,198,812**	**57,432,741**
Ծառայությունների ինքնարժեք	(35,178,565)	(39,779,619)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	(1,726,970)	(1,262,247)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**(36,905,535)**	**(41,041,866)**
Համախառն շահույթ	**16,293,277**	**16,390,875**
Այլ գործառնական եկամուտ	1,180,668	329,533
Ընդհանուր և վարչական ծախսեր	(5,590,244)	(5,872,942)
Իրացման ծախսեր	(3,589,402)	(3,620,388)
Այլ գործառնական ծախսեր	(6,446,141)	(3,581,565)
Գործառնական գործունեությունից շահույթ	**1,848,158**	**3,645,513**
Ֆինանսական եկամուտ	3,669,668	3,098,899
Ֆինանսական ծախսեր	(66,177)	(58,652)
Զուտ փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած մնաց	1,494,675	10,159,528
Շահույթ մինչև հարկումը	**6,946,324**	**16,845,288**
Շահութահարկի գծով ծախս	(3,019,495)	(2,144,442)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ	**3,926,829**	**14,700,846**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	**3,926,829**	**14,700,846**

	Ընկերության սեփականատերերին վերագրելի			
հաշ. 22 դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Այլ պահուստներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	**18,837,709**	**98,324,855**	**2,825,656**	**119,988,220**
Ընդամենը 2014թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	14,700,846	-	14,700,846
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**18,837,709**	**113,025,701**	**2,825,656**	**134,689,066**
Ընդամենը 2015թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	3,926,829	-	3,926,829
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**18,837,709**	**116,952,530**	**2,825,656**	**138,615,895**

հազ. ՀՀ դրամ	2015թ.	2014թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված վճարումներ	59,428,345	61,799,955
Ստացված տոկոսներ	210,098	473,545
Մուտքեր այլ գործառնական գործունեությունից	127,143	255,586
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(24,919,279)	(21,229,112)
Վճարումներ աշխատակիցներին	(7,851,762)	(7,842,945)
Վճարված շահութահարկ	(5,732,455)	(6,325,000)
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը	(5,329,998)	(5,786,816)
Պաշարների մատակարարներին վճարումներ	(2,453,280)	(2,621,989)
Վարձակալության վճարներ	(1,363,532)	(1,352,810)
Գործուղումների համար կատարվող վճարներ	(129,928)	(132,543)
Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ	(326,221)	(775,450)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**11,659,131**	**16,462,421**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(6,601,410)	(6,407,284)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	68,620	86,620
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ	(7,595,680)	(15,019,780)
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառության մարում	8,280	4,830
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(14,120,190)**	**(21,335,614)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(31,731)	187,414
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**7,379,879**	**12,065,658**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**4,887,089**	**7,379,879**

Ծանոթագրություն

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներկայացված բոլոր բացահայտումները, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրությունները, որոնց բացահայտումը պահանջվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: